

Հակոբ Հակոբյան. Հայ գեղանկարչության նահապետը



Անուններ կան, առանց որոնց դժվար, չասելու համար՝ անհնար է պատկերացնել արդի հայ գեղանկարչությունը: Հակոբ Հակոբյանը 1962-ին հայրենիք եկավ իր ծննդավայր Եգիպտոսից, երբ 40 տարեկան էր ու արդեն իր ոճը գտած նկարիչ: Մինչ այդ նա իր տասը լավագույն գործերն ուղարկել էր Հայաստանի ազգային պատկերասրահ՝ որպես հոգու պարտք և նվիրվածության առհավատչյա:

...Այսօրվա պես հիշում եմ տարիներ առաջ նույն պատկերասրահի՝ միանգամից մի քանի դահլիճներում

բացված նկարչի անհատական մեծ ցուցահանդեսը, որտեղ կողք կողքի ցուցադրված էին նրա ստեղծագործական կյանքի բոլոր շրջաններն ընդգրկող շուրջ 150 աշխատանքներ՝ պարզորոշ պատկերացում տալով արվեստագետի անցած գեղարվեստական ուղու մասին: Գերակշռողն, իհարկե, բնապատկերներն ու նատյուրմորտներն էին՝ արված յուղաներկով ու ջրաներկով: Ճիշտ է, մինչ Հայաստան գալը թե՛ քանակապես, թե՛ որակական առումով նատյուրմորտներն էին առաջնային դիրք զբաղեցնում, սակայն հայրենի եզերքը նրան մղեց ավելի շատ բնանկարներ անելու: «Հայաստանն անվերջ նյութ է նկարչի համար», - սիրում էր կրկնել արվեստագետը:

Թերևս հարկ չկա մանրամասն խոսել Հայաստան աշխարհի հակոբյանական ընկալման մասին. Այն բոլորին է հայտնի: Հիշեցնենք միայն, որ մինչ նրա հայտնվելը մեզանից ոչ մեկն այդ կերպ չէր ընկալում մեր երկիրը, մեզ շրջապատող բնությունը: Ե՛վ մենք, և՛ հյուրերը Հայաստանը հիմնականում տեսնում էին Սարյանի մատուցմամբ, նրա վառ, արևային գույներով: Եկավ Հակոբ Հակոբյանը, հրամցրեց ի՛ր Հայաստանը, և մենք տեսանք ու ճանաչեցինք մեր հողն այդ նույն հողի գույներով ու երանգներով: Սա՛ է ճշմարիտ արվեստի մոգական ուժը, նրա զարմանահրաշ հայտնագործություններից մեկը:

Վերափոխելով Դավիթ Անհաղթի հանրահայտ խոսքերը՝ կարող ենք ասել. «Ինչպե՞ս կարող է եզր ունենալ կերպարվեստը, երբ անեզր է բնությունը»: Հակոբյանական բնանկարները մատնում են առ մայր բնությունը նկարչի ունեցած երկյուղած վերաբերմունքը: Նկարիչը սիրում է բնությունը հանգիստ վիճակներում, երբ հանդարտություն է տիրում շուրջբոլորը: Անդորր է ոչ միայն «Անդորր»ում կամ «Ջրանցքի մոտ», այլ նրա նաև մյուս բնանկարներում: Դրանցում, ճիշտ է, բացակայում է մարդը (այսպես կոչված «անանձնական բնանկարներ» են), սակայն առկա է նրա, ընդհանրապես Տեսանողի հայացքը: Ինչպես Մարտիրոս Սարյանն է գրել իր կրտսեր բարեկամի մասին. «Նա (Հակոբ Հակոբյանը-Լ.Լ.) կարողանում է գրուցել բնության հետ»:

Հակոբյանի մեղմ ու սառը մոխրավուն-արծաթավուն գույներն առավել շահեկան են հնչում ուշ աշնանը, երբ ծառերն ու թփերը, քարերն ու դաշտերը կարծես իրենց ողջ մերկությամբ ու



պարզությամբ են պատկերանում մեր առջև, ցուցադրում իրենց պարզ ձևերը՝ առանց զարդարանքի և սեթևեթանքի: Այդպիսին էլ նկարչի արվեստն է՝ հստակ ու զուսպ, անզարդ ու անպաճույճ, ներդաշնակ ու հավասարակշիռ:

Ջարմանալին այն է, որ թվում էր, թե իր ոճով և նախընտրած ձևի մեջ նկարիչն արդեն հասել է կատարելության մի սահմանի, երբ հետագա զարգացման տեղ այլևս չկա: Մինչդեռ նա ամեն օր վերստեղծում էր հայրենի բնության տեսարանները՝ հիացնելով դիտողին: Նրա արվեստն ամբողջությամբ և ամեն մի ստեղծագործություն՝ առանձին-առանձին, որքան էլ զարմացնելու միտումով չեն ստեղծված, շարունակում են զարմացնել:



Այս առումով առավել ուշագրավ են Վարպետի նատյուրմորտները: Դրանք կարելի է մի քանի շրջանի բաժանել՝ վաղ և ուշ շրջանի գործեր: Միավորողը թերևս պատկերված առարկաներն են՝ սեղան-աթոռ, ձեռնոց-վերարկու, ձու, թափանցիկ անոթ, մանեկեն և այլն: Մեկ էլ՝ ճշգրիտ հաշվարկված կոմպոզիցիոն կառուցվածքը, երբ ամեն իր ու առարկա իրենց ստույգ տեղն ունեն: Տարբերությունը պատկերվածի հանդեպ նկարչի հայացքի ու վերաբերմունքի մեջ է: Առաջին շրջանի գործերում առարկաները պասիվ են ու անշարժ, մինչդեռ ուշ շրջանի, այսպես կոչված, «գործիքային» նատյուրմորտներում դրանք ոչ միայն կարծես շարժվում են, այլև կտրում են ու հարձակվում, զրուցում ու... սիրահարվում:

Հաճախ էի այցելում Երևանի Կիևյան փողոցի վրա գտնվող Հակոբ Հակոբյանի ընդարձակ արվեստանոց, զրուցում նրա հետ արվեստի և ոչ միայն արվեստի մասին: Չնայած, այո, վառ գույների սիրահար չէր, սակայն պատկառանքով էր խոսում մեծն Սարյանի մասին:

Նկարչի արվեստանոցում իր հանրահայտ նկարների կողքին կարելի էր տեսնել յուրատեսակ քանդակներ՝ պատրաստված մետաղյա տարբեր գործիքների զանազան մասերի միակցությամբ: Իհարկե, միայն անսահման երևակայություն ունեցող արվեստագետը կարող էր դրանք ստեղծել: Վերջին տարիներին մատչելի էին հիմնականում զբաղված էր այսօրինակ քանդակներ կերտելով: Դրանք միայն մարդկային ֆիգուրներ չէ, որ հիշեցնում են: Դրանք նաև մարդկային տարբեր բնավորություններ են կերպավորում, միջանձնային հարաբերություններ արտահայտում:


Սկզբում, ինչպես Վարպետն ինքը բացատրեց, այդ քանդակներն արել է որպես «պերսոնաժներ»՝ կտավների վրա փոխանցելու համար: Փոխանցելուց հետո, սակայն, քանդակները շարունակել են ապրել իրենց ինքնուրույն կյանքով: Ավելին՝ «Սիրահարներ» անունով երկմետրանոց մետաղյա արձանն այսօր այլևս զարդարում է իր ապրած շենքին մերձ գտնվող պուրակի մի անկյունը՝ որպես հեղինակի նվերը բալի բնակիչներին: Ըստ Հակոբ Հակոբյանի, ինքը պիտի երագեր, որ նկարչությունն էլ այդպես արագ ստացվեր:

Առանց նկարելու, սակայն, Վարպետը չէր պատկերացնում իր կյանքը: Նկարակալին, հիշում են, վերջին նկարն էր՝ «Նարեկացի» պայմանական



անվամբ: Միջնադարյան բանաստեղծն ամբողջովին պատված է վերքերով: Այդպիսին է ընդհանուր առմամբ հեղինակին պատկերանում հայ ժողովուրդն իր հին ու նոր պատմությամբ, վերջինիս անկումներով ու վերելքներով: Հպարտ էր, իհարկե, անկախ Հայաստանով, նրա նորոգ պետականությամբ, քանի որ, իր համոզմամբ, «Մշակույթի բարձրագույն արտահայտությունը պետությունն է»:

Մյուս կողմից, սակայն, քաղաքացի արվեստագետը մտահոգ էր պետականաշինության ոլորտում մեր պետական այրերի թույլ տված բացթողումներով ու սխալներով: «Հակոբյան-քաղաքացին ձևավորեց Հակոբյան-նկարչի արվեստը», – իրավացիորեն գրում է Հենրիկ Իգիթյանը: Ավելին՝ այն նաև արվեստագետին մղեց հրապարակագրության ասպարեզ: Նկարելուն զուգընթաց Հակոբյանը պարբերաբար հոդվածներ էր տպագրում «Ազգ» օրաթերթում, լույս ընծայում գրքեր: Վերջինը, որ լույս տեսավ, 2006-ին Երևանում, կրում էր «Ու մերթ լացավ, ու մերթ խնդաց իմ հոգին» վերնագիրը: Այն պարունակում է ինքնատիպ խոհագրություններ, հոդվածներ ու հարցազրույցներ Հայաստան աշխարհի, հայ ժողովրդի ու նրա մշակույթի մասին:



Քաղաքացի արվեստագետը դառնացած էր վերջին տարիների մեր իրականությամբ: Նրա նկարած չոր մացառներն ու դժվարությամբ երկինք բարձրացող խաղողի որթերը, խանձված արտերն ու հեռագրասյուների խիտ շարքերն այլաբանական խորը ենթատեքստ ունեն: Դրանք փիլիսոփայական ընդհանրացմամբ հաղորդում են մեր ժամանակների տագնապն ու հեղինակին համակած հոգու դրամատիզմը: Նա մտահոգ էր հատկապես շարունակվող արտագաղթով: Գտնում էր, որ Խորենացուց այս կողմ չի շատացել հայ ժողովուրդը՝ մնալով «փոքր ածու»:

Իր եկիրը թողնել-գնալու մասին, սակայն, երբեք չմտածեց: Միշտ էլ փորձեց հաշտ ապրել ինքն իր հետ՝ իրականացնելով երջանկության իր բանաձևը. սիրած գործով կարողանալ պահել իրեն ու իր ընտանիքը: Ծերունագարդ նկարիչը հաճախ էր կրկնում. «Օտարությունից եմ եկել հայրենիք: Ուստի չեմ մտածում հեռանալու մասին: Հայաստանն իմ վերջին հանգրվանն է»:

Այդպես էլ եղավ: Երևանում՝ իր սիրած արվեստանոցում նա հանկարծամահ եղավ 2013-ի հունիսյան մի օր՝ բռնելով հավերժի ճամփան: Այս ամիս նա կդառնար 95 տարեկան...

Լևոն Լաճիկյան